ԺԴ.

ԱԼԱՇԿԵՐՏԻ ՁՄԵՌՆ [1]

Տեսած եմք արդէն մենք Բագրեւանդայ արեւմտեան դաշտն թէ ո՞րպէս ձուաձեւ կերպարանք մը ունի, նաեւ թէ ո՞րպէս բարձր լեռնաշղթաներով շրջապատուած է։

Մենք մի ակնթարթով տեսած էինք Բագրեւանդայ հորիզոնը և նորա մէջ գտնուած ամբողջ բնական բաժանումներն. տեսած էինք Մուրատ, Շեռեան և որոց խառնուրդից առաջ եկած Արածանին, տեսած էինք 15 ից աւելի գետակներ, որք իւրեանց յստակ ջրոց արտացոլացումը հեռուից մեզ կը հասցնէին. տեսած էինք այն բազմաթիւ ճանապարհներն, որ ցանցի նման այս այն կողմ ձգուած են, տեսած էինք լեռներ, սարեր, բլուրներ, ժայռեր, ձորեր նաեւ բազմաթիւ գիւղօրայք։

Արդ, Հոկտեմբեր ամսոյ մէջ ենք, ձմեռն իւր գալուստը

---

1. Ձմեռուան ընթացքը Ալաշկերտի Թոփրագ-գալէ գիւղաքաղաքէն հետազոտած եմ եւ գրի առած։